

**ՀՆԱՐԱԳԵՏ ԳՈՂՆ ՈՒ ՄԻԱՍԻՏ ԹԱԳԱՎՈՐԸ / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII /  
Գուգարք (Լոռի), Լոռու բարբառ (խոսվածք)**

Մարթի մինը շատ գող ա ըլըմ: Դա որ շատ գողութին ա անըմ, թաքավորի ունեցվածքը որ  
շատ գողանըմ ա, թաքավորը դրա աչքերը հանիլ ա տալի:

Բայց իրա սաղ ժամանակը էդ մարթը, թաքավորի ոսկու պահեստը պատելու ժամանակ,  
ուստի հետ պատի մեջ էն դայդի քար ա դնըմ, որ կարելի ա հանիլ ու հլեդ տեղը դնիլ: Դա  
ունենըմ ա իրա պես ձարպիկ քվոր տղեք՝ էրկու հատ:

— Կանչըմ ա քվոր տղերանցը, թե. — Տղեք, Էկեք ըստի, զնանք թաքավորի ոսկու պահեստը  
կտրենք:

— Բա ո՞նց կտրենք, — հարցնըմ են տղեքը:

Ասըմ ա. — Դուք ինձ տարեք, ես կգտնեմ:

Տանըմ են ոսկու պահեստի կուշտը: Ձեռով ման ա զայի, քարը գդնըմ ա: Քարը հանըմ են,  
մտնըմ են, ոսկին գողանըմ: Մի քանի հետ թիենց տանըմ են:

Թաքավորը մի քանի օր եղը տենըմ ա ոսկին գողացած, համա ոչ մի հետք, իզ-միզ չկա: Հնար  
չի գդնըմ, թե ոնց տարած կլեն: Թաքավորը դես ա ընգնըմ, դեն ա ընգնըմ, հարց ու փորձ ա  
անըմ, քննըմ ա, համա հնար չի գդնըմ:

Իր ա իմաստուննին ասըմ են թե. — Ես ինչ քարը տեղահան արած ա, քոռին գդի, նա ըսպեց  
գող ա, նա կիմանա, թե ոնց գողացած կլեն ու ոնց կրոնեն էդ գողերին:

Թաքավորը կանչըմ ա գողին, ասըմ. — Ո՞նց կրլի էլած էս քանը, կարա՞ս ս հնար գդնես, թե ով  
տարած կրլի:

Քոռն ասըմ ա. — Մինչի կրանը էդ քարի տակ կպրի բոչկա դիր, գողերը կգան ոսկին տանելու,  
կրնգնեն մեջը:

Քոռն իրա քվոր տղերանցը հլեդ կանչըմ ա:

Սրանց ասըմ ա. — Բերեք ձեր հորը կպրի բոչկրմը դնենք, վրով զնանք, ոսկին հանենք:

Տղերանց ինելքը կտրըմ ա, որ իրանց հորը հլեդ կհանեն:

Հորը տանըմ են բոչկրմը դնըմ, վրովը զնըմ են, ոսկին հանըմ: Հլիվորին ձքըմ են, ձքըմ, կարըմ  
չեն հանեն:

Քոռն ասըմ ա. — Պառավ մարթ ա, բերեք գլուխը կտրենք, թաքավորը ճնանչիլ չի, թե ով ա:  
Գլուխը հանըմ են, էդ մարթին թողըմ կպրըմ թաղված:

Ռավողը զալիս են տենըմ պատը քանդած ա, ոսկին տարած, մի անգլուս մարթ էլ բոչկրմը:

Դես են տալի, դեն են տալի, հլեդ իմանըմ չեն, թե ոնց էլած կրլի: Հլեդ քոռին կանչըմ են. — Այ  
քոռ, էս ո՞նց կրլի էլած:

Ասըմ ա. — Շատ հեշտ ա: Բերեք էդ անգլուս մարթին տանենք ախաղըրի կշտին դնենք, ոնց  
ուզըմ ա ըլի, դրանց տերը կա, լաց կրլի, կիմանանք ով ա:

Ու ըտեղից զնըմ ա քվոր տուն, ասըմ. — Այ քիրա, մարթիդ բերիլ տեն ախաղըրի կուշտը, քու էլ  
լացը գալ տի: Կուլետ վեր կգձես, կկոտրես, լաց կլես, սիրտդ կիովացնես: Նրա վրա դրառու  
ստրածնիկնի կլեն, որ հարցնեն, կասես՝ կուլես կոտրեց, ընդուր հըմա եմ լաց ըլըմ, քասիք  
կնիկ եմ, մի կուլա ունեի, էն էլ կոտրեց:

Անգլուս մարթին տանըմ են ախաղըրի կշտին դնըմ, ստրածնիկնին էլ վրին դրառու են կադնըմ:  
Էդ մեռած մարթի կնիկը կուլեն վեր ա ունըմ, զնըմ ջուրը, կուլեն վեր ա գձըմ ու լաց ըլըմ:

Ստրածնիկնին ձեռաց բոնըմ են ու բերըմ թաքավորի կուշտը:

Թաքավորը հարցնըմ ա. — Էդ մարթը քու ի՞նչն էր, որ լաց էլար:

— Հետ մի բանս, կուլես վեր ընգավ, կոտրեց, ես էլ քասիք կնիկ եմ, լաց էլա:

Թաքավորը կուլի հախը տախս ա պառավին ու եղ դրզը:

Թագավորը դես ընկավ, դեն ընկավ, հլեղ քողին կանչեց. — Այ քոռ, սրանով էլ բան չի դուս էկավ, բա ի՞նչ անենք, ի՞նչ չանենք:

Թաքավորն ապրած կենա, անգլուխ մարթին ստրաժնիկներին տուր տանեն սարի գլուխը:

Ստրաժնիկնին մտիկ կանեն, ով գնա մեռելը տանելու, ուրեմք ոսկին նա ա տարել:

Մեռելը տանը են սարի գլուխը, ստրաժնիկնին դրառլ են կաղնը:

Քոռը քվոր տղերանցը ասըմ ա. — Տղեք, գնացեք ստրաժնիկների կուշտը, իշի քուռակը տանը թռղեք: Մըրիշ քարթու զինի էլ վի կալեք, րիզունը ստրաժնիկներին խմացրեք, ասեք. «Քասիք տղեք ենք, թողեք քշերը ձեր կրակի կշտին մնանք»: Ստրաժնիկնին քնեն թե չէ, մեռելը իշի վրա կապեք, էշը քուռակի հրմա կգնա տուն, — տանն էլ թամբահ ա անըմ, որ թաղեն, — ու ռավողը լաց էլեք, ասեք. «Էշը կորել ա»: Դուք իշի հրմա լաց կլեք, ստրաժնիկնին՝ մեռելի:

Թիհնց էլ անըմ են: Թաքավորը ստրաժնիկներին կանչըմ ա, քննըմ, համա ոչ մի բան էլ չեն գդնըմ: Դե ինչ տեին գդնիլ, գողութին անողն էլ ա մի մարդ, եղ գործողութիննին էլ: